ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Հետազոտող ուսուցչուհի՝ Սիլվա Մկրտչյան

Կամարիսի Ա. Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի կարևորությունը. ժամանակակից աշխարհում մի կողմից լայն հնարավորություններ են ստեղծվում տարբեր պետությունների ու ազգերի միջև երկխոսության կայացման և սոցիոմշակութային պատնեշների հաղթահարման համար, մյուս կողմից մշակութային համահարթեցման գործընթացները, բարոյական արժեհամակարգերի Փոխակերպումները, համամարդկային արժեքների ընդհանուր հարթակի ձևավորման միտումները հրատապ են դարձնում համամարդկայինի մեջ ազգային ինքնության պահպանման ու արդիականացման խնդիրները: Համաշխարհայնացման գործընթացներին զուգահեռ՝ օրեցօր ավելանում են էթնիկական և կրոնական հիմքի վրա տեղի ունեցող հակամարտությունները:

Թեմայի արդիականությունը. Համատարած փոփոխությունների և փոխակերպումների հետևանքով առաջացած խառնաշփոթը նպաստում է «ինքնութենական խուճապ»-ի տարածմանը, հատկապես, երբ արագ կողմնորոշվելու անհրաժեշտությունը մեծանում է և փոփոխությունների հորձանուտում ավելի է խորանում ինքնության ճգնաժամը: Այսպիսի պայմաններում «Ես»-ն առավել քան երբևէ «Ենք»-ի պաշտպանության կարիքն ունի: Այսպիսով, հարափոփոխ իրականության մեջ տարատեսակ մարտահրավերներին դիմակայելու համար անխուսափելի են դառնում ազգային ինքնությանն առնչվող պատմական ու տեսական հարցերի քննարկումը, անհատական ու ազգային ինքնության կերպափոխումների իմաստավորումն ու արժևորումը: Ազգային ինքնության հիմնախնդիրը հայերիս համար կարևոր է նախ և առաջ այն պատճառով, որ մեր հայրենակիցների զգալի մասն ապրում է հայրենիքից հեռու, որտեղ ձուլվելու վտանգն առավել մեծ է: Նույն խնդիրը ծառացած է նաև հայրենիքում ապրող հայ հասարակության այն հատվածի առջև, որն անհաղորդ է ազգային արժեքներին:

Թեմայի նպատակը. Էպոսի կարևոր և նշանակալի դերը աշակերտների հայրենասիրական դաստիարակության և արժեքային համակարգի ձևավորման գործում: նշանակություն ունի նաև պատմական հիշողությունը, որով իմաստավորվում է տվյալ ազգի անցյալը և հյուսվում նրա ինքնության «ոստայնը»:

ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանավոր հիշողությունում լավագույնս արտացոլվում է այն ամենը, ինչը հայտնվել է պատմագրության լուսանցքում: Այս իմաստով բանահյուսության նշանակությունն անուրանալի է, քանի որ այն թույլ է տալիս բացահայտել ինքնության խորքային շերտերը, որոնք, դուրս մնալով գրավոր պատմության էջերից, դրսևորվել են մշակույթի մեջ որպես առասպել, հեքիաթ, էպոս և այլն: Դիմակայելով ժամանակի կործանիչ ազդեցությանը՝ դրանք չեն մոռացվում, այլ փոխանցվում են սերնդեսերունդ՝ հանդես գալով իբրև հավաքական ինքնության յուրօրինակ «այցեքարտ»: Հաշվի առնելով ժողովրդական բանահյուսության, մասնավորապես՝ էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնաճանաչողության գործում ատենախոսության մեջ ուսումնասիրության առարկա է դարձել «Սասնա ծռեր» էպոսը: Հայկական էպոսում արտահայտվել է հայի հավաքական կերպարը իր բոլոր ներքին հակասություններով, սխրագործություններով ու դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմնացորդ նվիրումի արտահայտություններով: Էպոսի հերոսների կերպարներում հայ մարդու հոգեկերտվածքի յուրահատկությունները դրսևորվել են դիցաբանական սյուժեների «զգեստավորմամբ», այլաբանական դիպվածներով և ծածկագրված խորհուրդներով, որոնք կարոտ են գաղտնազերծման և բազմակողմանի քննության: Հայկական էպոսում արտացոլվել են հայոց բարոյական արժեհամակարգի անկյունաքարային գաղափարները, արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն արդիական է ժամանակակից քաղաքակրթական շարժընթացների համատեքստում: Էպոսում արտացոլված են ազգային ինքնության արքետիպային գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական արդի հիմնախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ թերիների ախտորոշման և հաղթահարման համար: Հումանիտար տարբեր գիտությունների հետազոտողներն ընդգծում են էպոսի էական նշանակությունն ազգային արժեքների ձևավորման ու պահպանման գործում փաստելով ազգային ինքնության արդիականացման և

նորոգման բարդ գործընթացում այդ հավաքական և բացառիկ ստեղծագործության մեծ դերը: Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Չնայած հազարամյակների պատմություն ունենալուն հայկական էպոսը, որը հայտնի է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» անվամբ, գիտական ուսումնասիրությունների առարկա է դարձել միայն սկսած XIX դարավերջից: Հայկական էպոսի ուսումնասիրությունների ռահվիրան և նախակարապետը Գարեգին Սրվանձտյանցն է, որն էպոսը գրի է առել 1874 թվականին «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհերի դուռ» խորագիրը կրող գրքույկում: Էպոսի գրառումից հետո սկսվեցին որոնումներ և տարբեր սերունդների բանահավաքների կողմից գրառվեցին շուրջ 160 նոր պատումներ: Թեև հայկական էպոսի ուսումնասիրությունների հետագա ընթացքը եղել է բավականին արգասաբեր, այդուհանդերձ այսօր էլ առկա են որոշակի տարաձայնություններ հայկական էպոսի ծագման, կառուցվածքի, բովանդակային մեկնաբանությունների առնչությամբ: Որպես ուսումնասիրության սկզբնաղբյուր օգտագործվել է էպոսի համահավաք տեքստը՝ «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, Մ՛. Աբեղլևսնի, Գ. Աբովի, Ա. Ղանալանյանի աշխատասիրությամբ, Եր., 1961: Ատենախոսության մեջ էպոսի վերաբերյալ հրապարակի վրա գտնվող ուսումնասիրությունները դասակարգվում են երեք խմբերում բանասիրական-գրականագիտական, իմաստասիրական և հոգեբանական: Բանասիրական-գրականագիտական բնույթի ուսումնասիրությունները միտված են բացահայտելու էպոսի ծագման, կառուցվածքի, բովանդակության, տիպաբանական և ժանրային հատկանիշները (Գ. Սրվանձտյանց, Մ. Աբեղյան, Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Հ. Օրբելի, Բ. Խալաթեանց, Ստ. Կանասյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Գր. Գրիգորյան և ուրիշներ)[1]: Հայկական էպոսի նկատմամբ բանասերների, գրականագետների ու մշակութաբանների ուշադրությունը չի մարել նաև վերջին տասնամյակներում և շարունակվում է մինչ օրս (Ա. Եղիազարյան, Ս. Հարությունյան, Ա. Սահակյան, Լ. Աբրահամյան, Ա. Պետրոսյան, Լ. Խեչոյան, Թ. Տոնոյան, Ս. Ավետիսյան, Հ. Համբարձումյան և ուրիշներ):[2] Վերջին տասնամյակում ՀՀ-ում կազմակերպվում են պարբերական գիտաժողովներ՝ նվիրված հայկական էպոսի ուսումնասիրությանը,

[1] Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005: էջ 15-22
[2] Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004 էջ 63-65

որոնցից առավել արժանահիշատակ է «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» խորագրով գիտաժողովը, որի ընթացքում քննարկվել են էպոսագիտական հարցեր, մասնավորապես՝ հայկական էպիկական ավանդույթների պատմությունը, տարբեր ժողովուրդների էպիկական ժառանգությունը, կատարվել են համեմատական վերլուծություններ և զուգահեռներ են անցկացվել հայկական ժողովրդական էպոսի առնչությամբ: Ուսումնասիրությունների երկրորդ խմբում ընդգրկված են այն աշխատանքները, որոնցում լուսաբանվել ու արժևորվել են հայկական էպոսի իմաստասիրական, բարոյահոգեբանական շերտերը, խորհրդանիշային, թաքնագիտական իմաստները և էպոսի ուրույն դերակատարությունն ազգային ինքնության հարացույցում (Գ. Նժդեհ, Է. Աթույան, Ա. Ոսկանյան, Ս. Զաքարյան, Ա. Արմին, Ս. Մանուկյան և ուրիշներ): Հարկ է նկատել, որ փիլիսոփայական տեսանկյունից էպոսի ուսումնասիրությունը նոր հորիզոններ է բացում ազգային ինքնության ու հոգեկերտվածքի բացահայտման բազմաբարդ գործընթացում, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում էպոսում արտացոլված փիլիսոփայական աշխարհայացքի վերհանմանն ու վերլուծությանը: Հայկական էպոսին նվիրված երրորդ խմբի հետազոտություններում (Գ. Շահվերդյան, Ս. Մարգարյան և ուրիշներ) փորձ է արվել հայկական էպոսը վերլուծել հոգեբանության դիրքերից, մասնավորապես՝ հետաքրքրական են Կ. Յունգի՝ կոլեկտիվ անգիտակցականի արքետիպերի տեսության շրջանակներում կատարված հետազոտությունները, որոնք նոր լույսի ներքո են ներկայացնում էպոսում տեղ գտած իրադարձություններն ու կերպարները: Հետազոտության օբյեկտը հայոց ինքնությունն է, առարկան՝ հայոց ինքնության դրսևորումները «Սասնա ծռեր» հայկական էպոսում:Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրությունը պատմական տեսանկյունից;

«Սասնա ծռեր» էպոսը ձեւավորվել է VIII-X դարերում տեղի ունեցած պատմական մեծ իրադարձությունների ընթացքում՝ որպես արաբ զավթիչների դեմ հայության մղած տեւական պայքարի եւ նվաճված անկախության գեղարվեստական արտահայտություն: Էպոսն արտացոլում է հայ ժողովրդի հավաքական մտածողությունը, նրա կենսասիրությունն ու բարոյական ըմբռնումները, եւ, որ ամենակարեւորն է, ազատասիրական ոգին:

Դյուցազներգությունը բաղկացած է չորս ճյուղից՝ «Սանասար եւ Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» եւ «Փոքր Մհեր»: Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառը հայերենում նշանակում է դիվահար, խենթավուն, խելահեղ, քաջ, եւ իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում: Էպոսն անվանում են նաեւ «Ջոջանց տուն», այսինքն՝ «Մեծերի տուն», «Ավագների տուն», «Հսկաների տուն», «Քաջաց տուն»: Այդ քաջաց տոհմին պատկանող կանանցից է սերվում հերոսների երեք կրտսեր սերունդ:

«Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերից ամենանշանավորը եւ հայ ժողովրդին ամենահոգեհարազատը «Սասունցի Դավիթ» ճյուղն է: Այստեղ հայ ժողովուրդը նզովում է նենգ իշխաններին, եւ փառաբանում հայրենասեր, ուժեղ, քաջ հերոս Դավթին: Դավիթը դեռ փոքր ժամանակ Մելիքին ցույց է տալիս իր ուժը, նա չի հնազանդվում Մելիքին, չի անցնում թրի տակով: Մելիքի պատերազմ հայտարարելը Սասնա քաղաքին առիթ է հանդիսանում Դավթին ի ցույց դնելու իր խոհեմությունն ու բազկի ուժը: Նա հասկանում է, որ այդ պատերազմը ուղված է իր դեմ, այլ ոչ իր անմեղ ժողովրդի, ուստի եւ այս պատերազմին չպետք է մասնակից դառնային եւ ոչ մեկի անմեղ ժողովուրդը: Այսպես Դավիթն վերցնելով իր հոր զենքն ու զրահը գնում է Մսրա աշխարհ, ճանապարհին զգուշացնելով իր գալուստի մասին Մսրա աշխարհին.

-Էհե՜յ, ով քնած է՝ արթուն կացեք,
Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,
Ով թամբել է՝ զենքե՛ր կապեք,
Ով կապել է՝ ելե՛ք, հեծե՛ք,
Չասեք Դավիթ գող-գող էկավ
Գողճգող գնաց:

Հանդիպելով երես առ երես Դավիթը եւս մեկ անգամ արիություն եւ դաստիարակություն է ցուցադրում Մելիքին, Մսրա ժողովրդին: Մելիքի խնդրանքով արդեն պայմանավորված երեքական հարվածներից առաջին եռյակը ուղում է Դավթի դեմ Մելիքը: Սակայն Դավիթն կանգնած է մնում ասես մի վիթխարի լեռ, որը դիմադրում է ցանկացած արհավիրքի:[3] Հերթը հասնում է Դավթին: Առաջին երկու

[3] 1.Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. էջ 54-58

հարվածները նա Մելիքի մոր եւ քրոջ խնդրանքով բաշխում է նրանց, չէ որ նրանք են պահել, մեծացրել իրեն: Սակայն երրորդ հարվածը այնքան ուժեղ է լինում, որ այն քառասուն գոմշի կաշի վրան քաշած Մելքին կիսում է մեջտեղից: Այս պատկերը շատ խորը արտացոլվում է հայ ժողովրդի մեջ եւ գեղեցիկ արտաբերվում էպոսում.

-Կանչեց, զարկեց, Թուր Կեծակին

Կըտրեց քառսուն ջաղացի քար,

Կըտրեց քառսուն գոմշի կաշին,

Կըտրեց հրեշ Մըսրա Մելքին:

Ու յոթ գազ էլ մտավ գետին, գնաց, հասավ մինչեւ սեւ ջուր:

Այսպիսով մեծ է հայկական էպոսի դերը ամբողջ աշխարհին հայկական արիությունն ու մարտական ոգին ցուցադրելու գործում: Եվ զարմանալի չէ, որ մի մրցույթի ժամանակ հայկական էպոսը ճանաչվել է լավագույնը մնացած ժողովրդների էպոսների մեջ:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում[4]՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների

[4] Հանրակրթական պետական կրթակարգ, չափորոշիչ ,,Անտարես,, Երևան, 20216 էջ 25-29

ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային

հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Ինչպես գիտեք, հայրենասիրական բնույթի զգացմունքները դրված են ողջ կյանքի եւ մարդկության առկայության վրա `որոշակի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության ներքո: Այսպիսով մարդիկ անմիջականորեն ծնվում են բնության մեջ, շատ բնական եւ աննկատ են իրենց համար, սովորեցնում են շրջակա բնության, շրջակա միջավայրի, ինչպես նաեւ իրենց հայրենի երկրի մշակույթին, այսինքն, իրենց հայրենի ժողովրդի կյանքին:

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Ահա թե ինչու, ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի սիրո զգացումն իր հայրենի քաղաքին, քաղաքին, երկիրին: Միայն դրանից հետո նա հիացմունք է զգում իր հայրենի գյուղի համար: Մի քանի դասից հետո դրանք չեն առաջանում: Որպես կանոն, սա արդյունք է համակարգված եւ բավական երկար, ինչպես նաեւ նպատակային ազդեցությունը երեխայի վրա:

Երեխաների դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ, դասարանում, գործողություններում, նույնիսկ խաղի մեջ եւ տանը: Մանկավարժական աշխատանքը կառուցված է այնպես, որ անցնում է սրտով, բառացիորեն մանկապարտեզի յուրաքանչյուր աշակերտ: Հայրենիքի հանդեպ նախադպրոցական սերը սկսվում է նրա մոտ իրեն վերաբերմունքի ձեւավորմամբ `մայրիկի, հայրիկի, պապի, տատիկի հետ, իր տանը սիրով, այն փողոցը, որտեղ նա ապրում է:[5]

[5] Հանրակրթական պետական կրթակարգ, չափորոշիչ ,,Անտարես,, Երևան, 20216 էջ 25-29

Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: Ա. Ղազարոսյանը հիշեցնում է, որ հայրենասիրությունն ամենաուղղակի առնչությունն ունի ծնողասիրության ու որդեսիրության հետ, և որ պատմությունն այդ իմաստով լավագույն ուսուցիչը կարող է լինել աշակերտների համար: Սովորողների բարոյական նորմերի, հայրենասիրության ձևավորման արդյունավետությունը երևում է այն ժամանակ, երբ դաստիարակության խոսքային մեթոդները զուգակցվում են գործունեության տարբեր ձևերի հետ, և աշակերտը այդ գիտելիքները դրսևորում է իր առօրյա վարքում՝ տանը, դպրոցում, ընկերների շրջանում:

«Սասունցի Դավիթ» էպոսը

«Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի ստեղծած բանավոր հարուստ ժառանգության ամենափայլուն արտահայտությունն է, գեղարվեստական մի հոյակապ կոթող, որը դուրս է եկել միջազգային ասպարեզ և կանգնել համամարդկային արժեք ներկայացնող ստեղծագործությունների կողքին:

Ձևավորվելով 8-10-րդ դարերում, երբ մեր ժողովուրդը հաղթական պայքար էր մղում արաբական նվաճողների դեմ, էպոսը բանավոր կերպով փոխանցվել է սերնդից սերունդ, տարածվել Հայաստանի տարբեր գավառներում և բազմաթիվ պատումներով հասել մինչև մեր օրերը: Իր հազարամյա բանավոր գոյության ընթացքում էպոսը հղկվել, բյուրեղացել է ժողովրդական ասացողների կողմից, ձեռք բերել գաղափարական հարուստ բովանդակություն, դարձել մեր ժողովրդի ոգու, կյանքի ու պատկերացումների գեղարվեստական մարմնավորումը:

Էպոսի գրավոր կյանքն սկսվեց 1874 թվականից, երբ հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչ Գարեգին Սրվանձտյանը հայտնագործեց այն: Էպոսի նկատմամբ հարաճուն հետաքրքրասիրությունը հանգեց այն բանին, որ հայագիտության մեջ ստեղծվեց մի ինքնուրույն բնագավառ՝ էպոսագիտություն:

Դեռևս 1939 թվականին՝ «Սասունցի Դավթի» ստեղծման հազարամյա հոբելյանի առիթով, մեր բանահավաքների ու բանագետների ջանքերով գրի առնված շուրջ վաթսուն տարբերակների հիման վրա ստեղծվեց էպոսի համահավաք տեքստը: Սակայն պրպտումներն ու որոնումները շարունակվեցին ու շարունակվում են: Այսօր հրապա-

բակի վրա գտնվող հարյուրից ավելի տարբերակների առկայությունը հասունացրել է էպոսի նոր համահավաք տեքստի ստեղծման անհրաժեշտությունը: Դա հնարավորություն կտա էպոսը հարստացնել նոր գծերով ու հատկանիշներով, որ առկա են վերջին տասնամյակներին հայտնաբերված տարբերակներում:

Հայտնի է, որ համաշխարհային ճանաչում ունեցող էպոսներից շատերը հիմնականում գրավոր մշակման ճանապարհով են հասել մեզ: Դա ինքնին ենթադրում է, որ այդ էպոսները, ինչքան էլ, ասենք, հարազատ են մնացել ժողովրդական ստեղծագործության ոգուն և էությանը, այնուամենայնիվ, իրենց վրա կրում են անհատական ստեղծագործության կնիքը: Այդ մասին են վկայում Հոմերոսի «Իլիականից» ու «Ոդիսականից» մինչև Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը:

Մեր էպոսը մեզ է հասել անաղարտ վիճակում, առանց անցնելու անհատական ստեղծագործության բովով, որով ավելի է բարձրանում նրա արժեքը որպես բուն ժողովրդական մտածելակերպի արտահայտություն: Եվ եթե այսօր խոսք է բացվում «Սասունցի Դավթի» հարյուրամյա գրավոր կյանքի մասին, դրա տակ հասկանում ենք ժողովրդի կենդանի խոսքից կատարված ստուգապատում գրառումները միայն: Ժողովրդի անաղարտ ստեղծագործություն լինելու հանգամանքը մեր էպոսի յուրահատուկ ու տարբերակիչ գծերից մեկն է:[6]

«Սասունցի Դավիթը» ստեղծվել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր ժողովուրդը թևակոխել էր հասուն ֆեոդալիզմի և քրիստոնեական հավատի տիրապետության դարաշրջանը, պավլիկյան ու թոնդրակյան շարժումների ձևով պայքար ծավալել՝ վերացնելու իրեն կեղեքող շահագործումն ու սոցիալական անարդարությունները: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ էպոսում դիցաբանական պատկերացումների համեմատությամբ առավել մեծ տեղ են գրավում իրական, պատմական եղելությունների գեղարվեստական ընդհանրացումները, երևույթների խոր ու ճշմարտացի մեկնաբանությունները: Ստեղծագործող ժողովուրդը մի հանճարեղ ամբողջականությամբ էպոսում սինթեզել է բոլոր այն նվաճումներն ու ձեռքբերումները, որ ստեղծել է նախապատմական ժամանակներից սկսած, փայլուն դրվագումներով մարմնավորել իր հազարամյակների փորձն ու իմաստությունը, բնության և հասարակական կյանքի երևույթների, գեղեցիկի ու վսեմի, մարդկայինի ու արդարության

[6] Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. էջ 54-58

նկատմամբ ունեցած ըմբռնումները, գաղափարական զենք է դարձրել այն ամեն լավն ու համամարդկայինը, որ կազմում է ամեն մի ժողովրդի հոգևոր գոյության հիմքը: Եվ այդ ամենը՝ ձուլված օտար նվաճողների դեմ մեր նախնիների դարավոր պայքարի ու մաքառումների հերոսական դրվագներին, դրված պատմական որոշակի հողի վրա, հագցրած պատմականության զգեստ: Ինչքան էլ հերոսների մի զգալի մասը բնության երևույթների մարմնավորում է և անդրադարձնում է ժողովրդի դիցաբանական պատկերացումները, էպոսը խորապես պատմական, պատմականության մեջ համապարփակ մի եզակի ստեղծագործություն է:

Իհարկե, պատմականություն ասելով պետք է հասկանալ ոչ թե որպես ժամանակագրական հաջորդականության տրամաբանությամբ զարգացող իրականությունը, այլ պատմական իրադարձությունների արձագանքը, մի արձագանք, որը էպոսում ստանում է պատմությունից միանգամայն տարբեր ժամանակագրություն՝ իր ետևառաջությամբ, ստեղծագործության ընդհանուր կառուցվածքի մեջ իր «բնական» տեղը կանգնելու անհրաժեշտությամբ: Այնպես որ, զարմանալի չէ, երբ, ասենք, մայրիշխանության կամ տոհմատիրական ժամանակաշրջանին հատուկ հարաբերությունների և ըմբռնումների ենք հանդիպում նույնիսկ էպոսի վերջին ճյուղում, երբ ժողովուրդը պատկերում է արդեն ներքին հարստահարիչների՝ ֆեոդալների ու եկեղեցականության դեմ իր պայքարը:

Այս տեսակետից խիստ ուշագրավ են էպոսի շատ հերոսներ՝ իրենց պատմական հիմքով և բնական ու տիեզերական երևույթները մարմնավորող հատկանիշներով: Այսպես: Էպոսն սկսվում է 10-րդ դարի պատմական գործիչ Գագիկ թագավորի անվան հիշատակությամբ: Գագիկի թոռներ են ներկայացվում Սանասարն ու Բաղդասարը, որոնք, սակայն, ասորական Սենեքերիմ թագավորի որդիներն են և մ.թ.ա. 681 թվականին ապստամբել են իրենց հոր դեմ, սպանել նրան, բայց գահին տիրացած Ասուրբանդ եղբոր հաշվեհարդարից խուսափելով՝ հասել են Սասունի լեռները, բնակություն հաստատել այնտեղ: Ժողովուրդն իր հիշողության ծալքերում ամուր պահել է պատմական իրականությունը և կիսապատմական, կիսամիֆոլոգիական գունավորումով ներկայացրել էպոսում: Դիտարկվել է նաև, որ Առյուծաձև Մհերի Մսըր գնալու և Մսրա գահը ամուր պահելու մեջ արձագանք են գտել 12-րդ դարի երկրորդ կեսի իրադարձությունները, երբ Պահլավունի իշխանների գլխավորած հայկական զորքը 30-

ամյա մի ժամանակաշրջանում դարձել է Եգիպտոսի Ֆաթիմյան տիրակալների նեցուկը՝ հասնելով մեծամեծ հաջողությունների: Ենթադրվում է, որ Միերը այդտեղ էլ պետք է առյուծ ձևեր, որովհետև Հայաստանում առյուծ չի եղել: Ստացվում է, որ պատմական ստույգ ժամանակագրությունը նկատի առնելու դեպքում պապը՝ Գագիկ թագավորը, իր թոռներից փոքր է շուրջ 17 դարով, իսկ Մեծ Միերի ու իր հոր արանքում երկու հազար տարուց ավելի ժամանակահատված կա:

Սակայն այստեղ էպոսի ժանրային յուրահատկության տեսակետից ոչ մի տարօրինակություն չկա: Պատմական ժամանակաշրջանների այսպիսի հսկայական անախրոնիզմները միջոց են եղել, որ ժողովուրդը հազարամ-յակների իր պայքարն ու մաքառումները, իր ձգտումներն ու երազանքները տեղադրի արաբական նվաճողների դեմ պայքարի ու հաղթանակի պատ-մական հողի վրա, բովանդակավորի այն: Եվ քանի որ այդ պայքարը համազգային-համաժողովրդական է՝ ծավալված սեփական ազատությունը պաշտպանելու անհրաժեշտության թելադրանքով, Սասնա դյուցազունները արա-բական նվաճողների դեմ հանած իրենց Թուր Կեծակին շողացնում են հայ ժողովրդի բոլոր ոսոխների գլխին՝ սկսած նախապատմական ժամանակներից մինչև Աջմու Շապուհ և Բապ Ֆրենկը, որոնց անուններում իր արձագանքն է գտել պարսկական տիրակալների ու խաչակիրների դեմ մղած պայքարը: Էպոսի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, որն իր գեղարվեստական մարմնավորումն է գտել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում: Սասնա դյուցազունները, իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ, միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնու-թագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Սանասարն ու Բաղդասարը, հիմնադրելով Սասնա բերդը, ապահովում են ժողովրդի անվտանգությունն ու քրտնաթոր աշխատանքի անձեռնմխելիությունը: Նրանք, ինչպես նաև նրանց հետնորդները, իրենց գերմարդկային ուժն օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռք բերելու նպատակով, այլ ի սպաս են դնում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքին: Բնութագրական է, որ Սանասարն ու Բաղդասարը առաջին հերթին Սասուն եկած աղքատների համար են տներ

կառուցում, հետո՝ իրենց համար ամրոց: Մեծ Միհրը երկար ժամանակ սասունցիներին պահում է որսով: Դևերին սպանելուց հետո Դավիթը նրանց հափշտակած ոսկին բաժանում է ժողովրդին, ինքը բավարարվում միայն մի ձիով: Իսկ երբ հայրենիքի վրա կախվում է արտաքին վտանգը, նրանք առանց հապաղման դուրս են գալիս այն վերացնելու վճռականությամբ: Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս Առյուծաձև Միհրը: Իմանալով, որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան, նա դիմում է այդ քայլին, որպեսզի իրենից հետո Սա-սունն անտեր ու անպաշտպան չմնա:[7]

Աստված թող մեկ տըղա տա մեզ,
Էրթա Մելիքի օձիք բռնի,
Թող չը հանգչի Սասնա ճրագ,
Աստըծու զառ գել չի ուտի:
Որ մենք կանք մեր աշխըրքին-տի մեռնենք.
Համա որ մենք մեռնենք,
Մեր տղա մեր տեղ սաղ ըլի՝
Մենք էլ սաղ տի հիշվենք:
Մեր տան անուն չի կորսվի,-

Այս խոր համոզմունքով է Միհրը դիմում անձնազոհության: Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը, սակայն, իր ամբողջական ու փայլուն արտահայտությունն է գտել էպոսի երրորդ ճյուղում՝ Սասունցի Դավթի կերպարի միջոցով: Մսրա Մելիքն ամեն ինչ անում է Սասնա ճրագը մարելու, Սասունը հափշտակելու համար: Բայց միշտ էլ նրա դեմ դուրս է գալիս ժողովրդի սիրելի զավակը՝ Դավիթը, խափանում օտար բռնակալի բոլոր դիտավորությունները: Ժողովուրդը աշխատավորի արդար զայրույթով ու սպանիչ ծաղրով է ներկայացնում բռնակալ Մելիքին ու նրա կամակատարներին, իսկ սիրելի հերոսի սխրագործությունները պատկերելիս ազատություն է տալիս իր երևակայությանը, հիպերբոլիկ պատկերներով պանծացնում նրան: Մանուկ Դավիթը

[7] Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005: էջ 15-22

չի անցնում բռնակալի թրի տակով: Փորձում են զոռով տանել, բայց ճկույթը դիպչում է քարին, և քարից կրակ է ելնում: Դավիթը այնպես է կոտը խփում հարկահան Կոզբադնի գլխին, որ կոտի փշրանքները մինչև օրս էլ թռչում են: Եվ, վերջապես, Դավիթը մի զարկով կտրում է քառասուն ջրաղացքար, քառասուն գոմեշի կաշի, Մելիքին կիսում երկու հավասար մասի և այնպես կիսում, որ Մելիքը զարկի ուժգնությունից չի զգում իր կիսվելը: Ավելին: Եթե հրեշտակը իր թևը դեմ չառներ Դավթի թրին, ապա կպատռվեր նաև դժոխքի սև ջուրը, և երկիրը կկործանվեր: Նվաճողի ու բռնակալի նկատմամբ այսպիսի հետևողական վճռականություն կարող է ցուցաբերել միայն այն ժողովրդի երևակայությունը, որը հազարամյակներ շարունակ անհավասար մաքառումների մեջ է եղել սեփական գոյության իրավունքը հաստատելու համար:

Էպոսում իր արտացոլումն է գտել նաև ժողովրդի դարավոր երազանքը սոցիալական արդարությամբ առաջնորդվող հասարակության մասին[8]: Ըստ էպոսի՝ Սասունը այն երկիրն է, ուր չկա մարդու շահագործում մարդու կողմից, ուր ամեն ոք կարող է յուրացնել միայն իր աշխատանքի արդյունքը: Բնորոշ է, որ երբ աշխատավոր մարդիկ լսում են, որ Սասունում ո՛չ հարկ են վերցնում, ո՛չ տուրք, բոլոր կողմերից գալիս և Սասունը բազմամարդ քաղաք են դարձնում:

«Ըհը՛, էն աստված, մենք կ՛ երթանք էդա Սասուն,
Որ Սանասարի, Բաղդասարի պես՝
Էրկու զորեղ փահլևան կա.
Որ այդ տեղի մարդոց ո՛չ հարկ կ’առնեն, ո՛չ տուրք,
Որ մեկ մարդ մեր ապրանք չզարնե տանի»:
Շատացա՛վ, մե՛ծ քաղաք եղավ Սասուն:

Ժողովուրդը էպոսում հետևողականորեն զարգացնում է իրեն կեղեքող սոցիալական մեծ չարիքի՝ հարկահանության դեմ պայքարի գաղափարը: Մեծ Միհրը վերացնում է Մսրա Մելիքի դրած հարկը, Դավիթը պատուհասում է հարկահաններին, Փոքր Միհրը սպանում է արևմուտքի թագավորին և Գոհարի հոր երկիրը ազատում հարկ վճարելու հարկադրանքից: Նման մի շարք տեսարաններով էպոսը ձեռք է բերում սոցիալական խոր բովանդակություն, դառնում

[8] Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004 էջ 63-65

հակաֆեոդալական-հակաեկեղեցական ուղղվածություն ունեցող ստեղծագործություն: Պատահական չէ, որ Սասնա դյուցազունների դեմ թշնամական դիրք են բռնում ոչ միայն օտար նվաճողները, այլ հաճախ նաև տանու շահագործողները, որոնք կցանկանային ոչնչացնել նրանց, եթե ուժները պատեր: Հիշենք հարիսայի միջադեպը, երբ Մարդու մեկ բոռբոռաց.

— Էլե՛ք, զարկե՛ք Դավթին,
Հարիսեն ձեռքեն խլե՛ք:
Ծերունի մարդ մ՛ էլ էնտեղ ասաց.
— Էն Մհերի զարմից է, մ'էրթաք:
Թե որ կարցաք էն չորս ունկանի պղինձ
Չորսով տեղից վերուք՝ գնացեք,
Թե չէ, մ՛ էրթաք, չէ՞ դուք խե՛ղճ եք…

Մատղավանքի վանահայրը գործակցում է օտար զավթիչների հետ Սասնա դյուցազուններին՝ Փոքր Մհերին, Ձենով Օհանին, Քեռի Թորոսին ոչնչացնելու համար: Վերջապես, Ոստանա իշխանը թակարդ է լարում, որ Փոքր Մհերին ու նրա ձիուն բռնի: Արտաքին ու ներքին կեղեքիչների դեմ դարավոր պայքարի փորձը ժողովրդին բարձրացրել է շահագործողներին ոչնչացնելու, իշխողներին ժողովրդի ներկայացուցիչով փոխարինելու գիտակցության մակարդակին, որը գեղարվեստական մարմնավորում է ստացել Բապը Ֆրենկին ու նրա մերձավորներին սպանելու և իշխանությունը փոքրավորներին հանձնելու պատկերում: Էպոսում դրսևորվել է նաև ժողովրդի խորշանքը ուրիշի սեփականությունը յուրացնելու նկատմամբ: Սասնա դյուցազունները ոչնչացնում են կողոպտիչներին, նրանց կողոպուտը վերադարձնում իրենց տերերին՝ ժողովրդին, և բավարարվում դրանով: Նրանցից ոչ մեկի մտքով անգամ չի անցնում նույնիսկ պարտված թշնամու ունեցվածքին ձեռք տալ: Մսրա Մելիքը հսկայական զորքով եկել էր Սասուն՝ թալանելու, ժողովրդին գերելու, Սասունը ավերելու վճռականությամբ: Իսկ ի՞նչ է անում հաղթող Դավիթը: Բռնակալին սպանելուց հետո զորքին ազատ է արձակում, իսկ ինքը Քեռի Թորոսի կտրիճների հետ վերադառնում Սասուն՝ մի սայլի վրա դրած

տանելով Մելիքի ականջը՝ որպես նրա ոչնչացման ապացույց, և ոչ թե ռազմական ավար:

Ժողովրդի իդեալները մարմնավորող դյուցազունները անտարբերությամբ և արհամարհանքով են վերաբերվում իշխանական դիրքին ու թագավորական գահերին: Նրանցից յուրաքանչյուրը կանգնում է թագավոր դառնալու հնարավության առաջ, նույնիսկ բոլորին առաջարկվում է այդ, սակայն բոլորն էլ մերժում են նման հնարավորությունը: «Ո՛չ թագավոր կ'ըլնեմ, ո՛չ -քաղքի տեր կ'ըլնեմ»,- այս սկզբունքով են առաջնորդվում նրանք՝ չցանկանալով իրենց ազնիվ ճակատը սևացնել ոսկեհուռ թագերի փայլով: Սասնա դյուցազունները պայքարում են ժողովրդի ներքնախավերի շահերի համար՝ համոզված, որ ոչ մի թագավոր կամ իշխան չի կարող նույնիսկ անցնել իրենց դիակի վրայով.

Բա մենք Սասնա տնեն չե՞նք,
ՉԷ, մենք Սասնա տնեն ենք,
Մենք մեռնենք, մեր գերեզմանի վերա
Թագավորներ չեն կարնա գա:

Էպոսն ստեղծող ժողովուրդն իր լավագույն իդեալները մարմնավորել է ոչ միայն Սասնա դյուցազունների միջոցով, այլև դրանց կրողներ է դարձրել կին հերոսներին: Նրանք ևս օժտված են դյուցազնական հատկանիշներով, հայրենասիրությամբ ու ժողովրդասիրությամբ, արժանապատվության բարձր զգացումով ու բնավորության ուժեղ գծերով: Եվ այդ ամենը՝ շաղախված այն անմնացորդ սիրով ու ջերմ հոգատարությամբ, որ տածում են իրենց սիրելիների նկատմամբ[9]:

Անմոռանալի է Ծովինարի անձնազոհությունը, որով փաստորեն սկսվում է էպոսը: Միայն ճշմարիտ հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը կարող են թելադրել նրաընտրությունը:

Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերվի,
Էն հազար-հազար հոգիք կորուսանին:

[9] Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005: էջ 15-22

Միերի մահվանից հետո Դեղձուն Ծամը յոթ դռների հետև սուգ է պահում մինչև այն պահը, երբ Դավիթը գնում է Մելիքի դեմ կռվելու: Ինչպիսի խոր սիրով ու ջերմությամբ է հնչում քսան տարվա սգից դուրս եկած տատի խոսքը Քուռկիկ Ջալալիին[10]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր

[10] Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004 էջ 63-65

սերունդ: Արցախի գոյապայքարի այսօրվա մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնված մեր պատմական հայրենիքի՝ Արցախի ապագան վտանգված է, իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր, վկան՝ Արցախի քառօրյա պատերազմը: «Հայրենասիրություն» բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը»: Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝ նպաստելով երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, և ամենևին էլ պատահական չէ, որ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խարսխվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը: Հանրակրթության 2-րդ աստիճանում հիմնական դպրոցի սովորողների հայրենասիրական մտածողության զարգացման համար ի նպաստ են դրվում ուսումնական տարբեր բնագավառների ընձեռած հնարավորությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005:

2. Հանրակրթական պետական կրթակարգ, չափորոշիչ ,,Անտարես,, Երևան, 2021

3. Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. 463 էջ.:

4. Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004